ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 հունիսի 2023 թվականի N 861-Ա

ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1067-Ն որոշմամբ հաստատված կարգի 1-ին կետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունից հետ վերցնել պետական սեփականություն հանդիսացող, ընդհանուր 33.663.410 դրամ մնացորդային արժեքով տրանսպորտային միջոցները (այսուհետ՝ գույք)՝ համաձայն հավելվածի, և նվիրաբերել «Երկրապահ կամավորականների միություն» հասարակական կազմակերպությանը (այսուհետ՝ կազմակերպություն)՝ կազմակերպության կանոնադրական խնդիրներին համապատասխան օգտագործելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել կազմակերպության հետ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նվիրաբերության պայմա-

նագրերի կնքման և հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը՝ պայմանագրերում սահմանելով, որ պայմանագրերի նոտարական հաստատման և գույքի պետական գրանցման ծախսերն իրականացվելու են կազմակերպության միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

01.06.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ